ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն _____ /Ի.Սարգսյան/

«29» 08.2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզ, գ. Ակունք

Ակունքի միջն. դպրոց, 4-րդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարանը

Տիգրանյան Հերմինե Միշայի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022-2023» ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

4-րդ դասարանում սովորում են 35 աշակերտ՝ 20 տղա և 15 աղջիկ: Կան գերազանց և լավ սովորող աշակերտներ: Կազմակերպված և ազնիվ դասարան է , որտեղ կա համերաշխություն, ընկերասիրություն և փոխադարձ հարգանք:

Ակտիվ , կազմակերպված, աշխույժ և խելացի դասարան է, որտեղ բոլոր ուսուցիչները սիրով են աշխատում:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները ա/ բ/ գ/ դ/

Դասարանի կազմակերպչական աշխատանքներ, դասասենյակի կահավորման և մաքրության պահպանում՝ առաջնորդվելով Պարետի 2020թ. օգոստոսի 18-ի №253-Ն որոշման հավելված №22-ով: Աշակերտների ինտելեկտուալ հմտությունների զարգացում, տարաբնույթ թեմաներով զրույցներ, քննարկումներ, որոնք կսերմանեն ընկերասիրություն, հայրենասիրություն, մարդասիրություն և առանձնահատուկ ուշադրություն ազգային արժեքների և ավանդույթների նկատմամբ: Աշակերտների անվտանգության և առողջության պահպանում, նրանց հաղորդակցման և համագործակցության կարողությունների զարգացում: Ծնողական ժողովների անցկացում, սերտ կապ ծնող-դպրոց-ուսուցիչ հարաբերություններում:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 - Հոգևոր դաստիարակություն

Երեխայի ճիշտ հոգեկերտվածքի զարգացման կարևոր գործոնն է նրա հոգևոր դաստիարակությունը: Սերմանել հարգանք ազգային մշակույթի, հոգևոր արժեքների նկատմամբ: Նրանք պետք է գաղափար կազմեն մեր եկեղեցական տոների մասին, պատկերացում ունենան դրանց ավանդույթների, ծիսակարգի և նշանակության մասին:

3.2 – Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, ճաշակը և գեղեցիկը գնահատելու կարողություններ զարգացնելու նպատակով հաճախել թանգարաններ, արվեստի սրահներ, պատկերասրահներ և այլն: Ունկնդրել դասական և ազգային երաժշտություն:

3.3 – Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Առաձնահատուկ վերաբերմունք ձևավորել պետության, պետական խորհրդանիշների նկատմամբ: Սերմանել և դաստիարակել աշակերտների մեջ հայրենասիրություն և կազմակերպել այցելություն Եռաբլուր և Ծիծեռնակաբերդ:

3.4 – Ֆիզիկական դաստիարակություն

Հետևել, որ հիմնական խմբում ընդգրկված աշակերտները դասերին ներկայանան համազգեստով և մասնակցեն դպրոցում կազմակերպվող սպորտային միջոցառումներին: Անցկացնել զրույցներ անձնական հիգենայի և առողջության վերաբերյալ:

3.5 – Աշխատանքային դաստիարակություն

Դպրոցական գույքի , դասագրքերի պահպանում և դրանց խնամքի գիտակցում: Հետևել, որ բոլոր աշակերտները ներգրավվեն իրենց կարողություններին համապատասխան աշխատանքում և գնահատեն ու կարևորեն աշխատանքը:

3.6 – Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել շրջակա միջավայրի նկատմամաբ հոգատար վերաբերմունք: Բակը, դպրոցը համարեն իրենց սեփականությունը և հոգ տանեն մաքրության և բարեկարգման համար: Հասնել նրան, որ նրանք գիտակցեն, որ բնության պահպանությունը յուրաքանչյուրիս գործն է:

4. - Դպրոց-ընտանիք կապը

Կազմակերպել զրույց ընտանիքում երեխաների և մեծերի փոխհարաբերությունների մասին: Կազմակերպել ծնողական ժողովներ, ցանկացած խնդրին լուծում տալ: Ամրապնդել դպրոց ընտանիք կապը: Ծնողներին ներգրավել դպրոցական առօրյա գործերի մեջ, ապահովել նրանց մասնակցությունը տարբեր միջոցառումներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Զրույց <<Աշակերտների վարքի կանոնների մասին կորոնավիրուսային հիվանդության պայմաններում>>	սեպտեմբեր	դասղեկ աշակերտներ
II	Զրույց «Իմ դպրոց՝ իմ տուն» թեմայով:		դասղեկ աշակերտներ
III	Անցկացնել զրույց « Հայրենիքի մասին «		դասղեկ աշակերտներ
IV	«Երաժշտությունը իմ կյանքում»	սեպտեմբեր	դասղեկ աշակերտներ
V	Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը	սեպտեմբեր	դասղեկ աշակերտներ
VI	Անցկացնել զրույց «Կոմիտասի դերը հայ ազգային արժեքների պահպանման գործում»	հոկտեմբեր	դասղեկ աշակերտներ
VII	Զրույց «Ուսուցչի դերի և նրա գործունեության մասին»		դասղեկ աշակերտներ
VIII	«Մարդիկ որոնց հանդիպում եմ ամեն օր»		դասղեկ աշակերտներ
IX	Անցկացնել զրույց «Բազմագույն բազմերանգ աշուն»	նոյեմբեր	դասղեկ աշակերտներ
X	Ի՞նչ է ընկերությունը, «Ո՞վ է իմ մտերիմ ընկերը»		դասղեկ աշակերտներ
XI	Մեծերը և փոքրերը:	նոյեմբեր	դասղեկ աշակերտներ
XII	Հայկական ավանդույթները և տոները		դասղեկ աշակերտներ
XIII	Ունկնդրել հայ կոմպոզիտորների կինոերաժշտությունը	դեկտեմբեր	դասղեկ աշակերտներ

XIV	Վատ և լավ սովորույթներ		դասղեկ աշակերտներ
XV	Ինչ եմ ուզում դառնալ	դեկտեմբեր	դասղեկ աշակերտներ
XVI	Զրույց նվիրված Ամանորյա տոներին։ Էքսկուրսիա՝ Ա.Խաչատրյան տուն թանգարան և համերգասրահ	դեկտեմբեր	դասղեկ աշակերտներ
XVII	Զրույց Ամանորյա տոների և Սուրբ ծննդյան տոների մասին	հունվար	դասղեկ աշակերտներ
XVIII	Զրույց ավանդական տոների մասին «Սուրբ Սարգսի» օրվա խորհուրդը	հունվար	դասղեկ աշակերտներ
XIX	Զրույց Հայոց բանակի ստեղծման պատմության մասին	հունվար	դասղեկ աշակերտներ
XX	Իմ սիրած երգերը և բանաստեղծությունները։ Ասմունքի ժամ	փետրվար	դասղեկ աշակերտներ
XXI	Իմ սիրած հեքիաթի հերոսը		դասղեկ աշակերտներ
XXII	Դաստիարակչական զրույց, պահպանել և մաքուր պահել դպրոցի գույքը		դասղեկ աշակերտներ
XXIII	Գիրք նվիրելու օր։ Անցկացնել զրույց	փետրվար	դասղեկ աշակերտներ
XXIV	Մարտի 8, ի՞չպես եմ շնորհավորում իմ մայրիկին, քույրիկին, տատիկին	մարտ	դասղեկ աշակերտներ
XXV	Ընթերցանություն, գարնանը նվիրված բանաստեղծություններ		դասղեկ աշակերտներ
XXVI	Իմ բնավորության լավ և վատ գծերը		դասղեկ աշակերտներ
XXVII	Զրույց Սուրբ հարության տոնի մասին	մարտ	դասղեկ աշակերտներ
XXVIII	Մայրության և գեղեցկության օր	ապրիլ	դասղեկ

			աշակերտներ
XXIX	Զրույց «Ցեղասպանության» մասին		դասղեկ աշակերտներ
XXX	«Ինչպե՞ս պետք է աշակերտը դրսևորի իրեն դպրոցում» թեմայով զրույց-քննարկում	ապրիլ	դասղեկ աշակերտներ
XXXI	Զրույց մայիսյան տոների մասին	մայիս	դասղեկ աշակերտներ
XXXII	Էքսկուրսիա Հաղթանակի զբոսայգի		դասղեկ աշակերտներ
XXXIII	Դաս միջոցառում «Համբարձման» տոնին նվիրված		դասղեկ աշակերտներ
XXXIV	Տարեվերջյան Էքսկուրսիա	մայիս	դասղեկ աշակերտներ